Կարգապահական գործ թիվ ԿԳ-21019

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 299-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/177-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱԼԻՆԱ ՍՄԵՅԻԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մարինե Ֆարմանյանի, Խորհրդի անդամներ՝, Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ալինա Սմեյիլի Ավետիսյանին (արտոնագիր թիվ 1766) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Անահիտ Թորոսյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների Պալատ, հայտնել է, որ դիմել է փաստաբան Ալինա Ավետիսյանին իրեն փաստաբանական ծառայություն մատուցելու նպատակով: Փաստաբանի և Դիմողի միջև 03.07.2020թ-ին կնքվել է իրավաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր, որի համաձայն Փաստաբանը պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը ՀՀ բոլոր դատական ատյաններում, հանդես գալ վերջինիս անունից պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններում, տալ իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև մատուցել իրավաբանական բնույթի այլ ծառայություններ:

Դիմողը հայտնել է նաև, որ վերջինս Փաստաբանին է վճարել 190.000 (մեկ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ գումար:

Դիմողի պնդմամբ Փաստաբանը հանդիսացել է Դիմողի ներկայացուցիչը թիվ ԵԱԴԴ/0280/02/18 քաղաքացիական գործի շրջանակներում, սակայն պատշաճ կերպով չի ներկայացրել իր շահերը և ամբողջությամբ ձախողել է դատական գործընթացը:

Դիմողը նաև մեղադրել է Փաստաբանին իր հեռախոսազանգերը անտեսելու և իրեն կոպիտ ձևով պատասխանելու մեջ: Մասնավորապես, Դիմողի պնդմամբ

Փաստաբանն իրենց վերջին խոսակցության ժամանակ ասել է, որ իրենից «կքերի» պայմանագրով սահմանված ողջ գումարը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 14.09.2021թ. թիվ 217-Ա/ԿԳ-21019 որոշմամբ փաստաբան Ալինա Ավետիսյանի նկատմամբ հարուցվել է **կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.7.2 և 3.5.5 **ենթակետերի խախտման հատկանիշներով:**

16.09.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Փարսադանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն և պնդել դիմումով իր հայտնածը:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Փաստաբանը կարգապահական գործով նախապատրաստողին 19.10.21թ-ին ներկայացրել է բացատրություն Դիմումի վերաբերյալ, որում նշվել է հետևյալը.

«Էկվիտաս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ալինա Ավետիսյանի 2020 թվականի հուլիսի 3-ին պատվիրատու Անահիտ Թորոսյանի հետ կնքել է իրավաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր:

Փաստաբանը նշել է, որ ծանոթանալով գործի նյութերին պարզել է, որ գործում ընդհանրապես բացակայում է որևէ ապացույց և գործը գտնվում է դատաքննության փուլում: Անահիտ Թորոսյանին հրավիրել է գրասենյակ և բացատրել, որ գործը գտնվում է դատաքննության փուլում, որ բացակայում է հայցապահանջը հիմնավորող որևէ ապացույց, բացատրվել է նաև, որ ի սկզբանե հայցին կից ներկայացված չեն եղել որևէ ապացույց և դատաքննության փուլում իր կողմից հնարավոր բոլոր հարցումները կատարվել և ներկայացվել է դատարան:

Փաստաբանը նշել է նաև, որ կնքված պայմանագրի շրջանակներում մասնակցել է տվյալ քաղաքացիական գործով նշանակված թվով երկու դատական նիստերին:

Փաստաբանը հավելել է նաև, որ Անահիտ Թորոսյանին ամբողջ ծավալով մատուցվել են ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված ծավալը,

ինչպես նաև ծառայությունները մատուցվել են բարեխիղճ և պատշաճ որակով:

<u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

03.11.2021թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Փարսադանյանը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

09.11.2021թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 14.12.2021թ ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. 03.07.2020 թվականին Անահիտ Թորոսյանը և «Էկվիտաս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ալինա Ավետիսյանը կնքել են իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և «Էկվիտաս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճենով:*

2. Պայմանագրի 1.2. ենթակետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ, կատարողը պատվիրատուին մատուցում է հետևյալ ծառայությունները՝ թիվ ԵԱԴԴ/0280/02/18 քաղաքացիական գործով դատական ներկայացչություն, փաստաթղթերի ուսումնասիրում, հավաքագրում և խորհրդատվություն: Ներկայացնում է Պատվիրատուի իրավունքները և օրինական շահերը ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանության բոլոր ատյաններում: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և «Էկվիտաս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճենով:*

3. Պայմանագրի 1.3.2 ենթակետի համաձայն՝ կատարողը սույն պայմանագրի 1.2. կետի ա ենթակետում նշված քաղաքացիական գործի ելքի մասին

երաշխիք չի տալիս և որևէ պատասխանատվություն չի կրում դատարանի կողմից ընդունված վերջնական դատական ակտերի համար:

4. Կողմերի միջև 03.07.2020 թվականին կնքված պայմանագիրը կողմերի փոխադարձ համաձայնությամբ խզվել է 22.05.21թ. և Դիմողի կողմից նշվել է, որ. «ստացա գործի նյութերը ամբողջությամբ, պարտք ու պահանջ չունեմ»: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի գրության պատճենով, ինչպես նաև 28.10.2021թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Փարսադանյանին տրված գրավոր բացատրությամբ:*

5. Հայցադիմումը կազմվել և դատարան է ներկայացվել այլ փաստաբանի կողմից նախքան փաստաբան Ալինա Ավետիսյանի հետ պայմանագիր կնքելը: *Սույն փաստը հաստատվում է կարգապահական նիստի ընթացքում դիմողի բացատրություններով:*

6. Փաստաբանը թիվ ԵԱԴԴ/0280/02/18 քաղաքացիական գործով դիմում է ներկայացրել դատարան և խնդրել թույլ տալ ծանոթանալ թիվ ԵԱԴԴ/0280/02/18 քաղաքացիական գործի նյութերին: Փաստաբանը մասնակցել է թվով 2 դատական նիստերի, որից հետո նշանակվել է վճռի հրապարակման օր*: Սույն փաստը հաստատվում է փաստաբանի կողմից տրված բացատրությունով, ինչպես նաև կարգապահական նիստի ընթացքում դիմողի բացատրություններով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված 23.11.21թ. տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Ալինա Ավետիսյանը (արտոնագիր թիվ՝ 1766) փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 14.06.2014թ., և 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը), որը կարճվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ Ալինա Ավետիսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«**Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝** Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված,

սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ ա. նյութերի ուսումնասիրությունը, բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով վստահորդի շահերի և իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու նպատակով փաստաբանի համար սահմանվում են որոշակի առանձնահատուկ պարտականություններ, որոնք կապված են փաստաբանի մասնագիտական կարողությունների և հմտությունների ու դրանցից բխող պատշաճ գործողությունների կատարման հետ:

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդն անհրաժեշտ է համարում պարզել, թե՝

- արդյոք փաստաբան Ալինա Ավետիսյանը մատուցել է պայմանագրով սահմանված ծառայությունները և եթե այո, ապա ինչ ծավալով:

- արդյոք փաստաբան Ալինա Ավետիսյանը տրամադրել է դիմողին բարեխիղճ և որակյալ իրավական օգնություն՝ ելնելով Դիմողի նպաստավոր շահերի և իր հանձնառություններից:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա գրավոր ապացույցները, լսելով կողմերի բացատրությունները, արձանագրում է, որ Դիմողի կողմից բավարար չափով փաստարկված և հիմնավորված չեն այն պնդումները, համաձայն որի Փաստաբան պատշաճ կերպով չի ներկայացրել իր շահերը և ամբողջությամբ ձախողել է դատական գործընթացը:

Ներկայացված ապացույցների շրջանակներում Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը թիվ ԵԱԴԴ/0280/02/18 քաղաքացիական գործի ընթացքում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար իրականացրել է անհրաժեշտ մասնագիտական գործողություններ, մասնավորապես՝ Փաստաբանը ծանոթացել է թիվ ԵԱԴԴ/0280/02/18 քաղաքացիական գործի նյութերին, մասնակցել է թվով 2 դատական նիստերի և Դիմողին տվել է խորհրդատվություն:

Այսպիսով, գնահատելով Դիմողի հանձնարարության շրջանակներում Փաստաբանի կողմից կատարված գործողությունները, Խորհուրդը փաստում է, որ Դիմողի պնդումները չեն հիմնավորվում, մինչդեռ գնահատված ապացույցների շրջանակներում հիմնավորվում է Պայմանագրի առարկայի շրջանակներում Փաստաբանի կողմից ստանձնած հանձնարարության կատարված լինելու հանգամանքը:

Միաժամանակ, անդրադառնալով վստահորդին բարեխիղճ և որակյալ իրավական օգնություն տրամադրելու հարցին, անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ Դիմողը ինչպես նաև 28.10.2021թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Փարսադանյանին տրված գրավոր բացատրությամբ այնպես էլ կարգապահական նիստի ընթացքում ըստ էության չի տվել հստակ դիրքորոշում, թե ինչպես է դրսևորվել Փաստաբանի կողմից բարեխիղճ

և որակյալ իրավական օգնություն չտրամադրելը՝ հնչեցնելով միայն, որ Փաստաբանը կարող էր այնպես անել, որ հայցը չմերժվեր, ինչպես նաև կարող էր դադարեցնել և ասեր, որ դժվար է ու չի կարողանում:

Խորհուրդը հարկ է համարում նաև նշել, որ Կողմերի միջև 03.07.2020 թվականին կնքված պայմանագիրը կողմերի փոխադարձ համաձայնությամբ խզվել է 22.05.21թ. և Դիմողի կողմից նշվել է, որ. «ստացա գործի նյութերը ամբողջությամբ, պարտք ու պահանջ չունեմ»:

Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նկատի ունենալով, որ դիմողի կողմից նկարագրված հանգամանքները չեն հաստատվել, Խորհուրդը փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերին հակասող, ուստի Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ և 39.8-րդ հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ալինա Սմեյիլի Ավետիսյանի (արտոնագիր թիվ՝ 1766) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մարինե Ֆարմանյան

14 դեկտեմբերի 2021թ.
թիվ ԿԳ/177-Ա
ք. Երևան